ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

10 հոկտեմբերի 2018 թվականի N 168-Ա

Ա. ԵՐԱՆՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով *Ա. Երանոսյանի* անձնական դիմումը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Նոր Հաճնի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Արարատ Երանոսյանին*** տրամադրել 2018 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից՝ հինգ աշխատանքային օր, 2018 թվականի հոկտեմբերի 15-ից մինչև հոկտեմբերի 19-ը ներառյալ:

2. ***Արարատ Երանոսյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Նոր Հաճնի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել ընկերության ընտանեկան բժիշկ ***Գայանե Խաչատրյանի*** վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թվականի հոկտեմբերի 10
ք. Հրազդան